

քայ իր աշակերտը՝ Մովսէս Տաթևացին (1629-1632 Մայիս 21 ✕) բազմած ըլլալը, իրեն տուած էր բացառիկ զիրք մը:

Արդարեւ իր ուսուցիչի զիրքը, տակաւին Կեսարիոյ աթոռին վրայ գտնուած ատենը արժեցուցած է հանդէպ Մովսէս կաթողիկոսին ալ՝ անոր ուղղելով յանդիմանագիր մը, վասնզի իր աշակերտը կաթողիկոսական աթոռ բարձրանալէ յետոյ, բարւոք յարաբերութիւններ կը մշակէր կաթողիկ քարոզիչներու հետ որ Երնջակ և Զուղա հաստատուած էին եւ Լեհաստանի հայերը տագնապեցնող խնդրոյն համար նոյն իսկ Պապին միջնորդութիւնը օգտակար դատելու միամտութիւնը ունեցած էր: Յետոյ Մովսէս Տաթևացի ինքն ալ միամիտ ակնկալութիւններ ունեցած էր Հռոմէն, յուսալով թէ անիկա Դպրատուն և Տպարան պիտի բանար Հայոց համար:

Այս նպատակով Սաչատուր վրդ. Կեսարացին 1630ին երբ Լեհաստան նուիրակ կը ղրկէ՝ անոր պաշտօն կուտայ նաեւ երթալ Հռոմ, բանակցելու համար Դպրատան և Տպարանին համար:

Իսկ անկէ առաջ 1628ին, Մովսէս Տաթևացի, Լեհաստանի Հայոց պառակտումին առջևը առնելու համար եպիսկոպոսական ժողովով մը որոշած էր «Ով հրա-